

AMWA-EMWA-ISMPP Joint position Statement on the Role of Professional Medical Writers

AMWA-EMWA-ISMPP համատեղ դիրքորոշման հայտարարությունն արհեստավարժ բժշկական գրողների դերի մասին

Ներածություն

Ամերիկյան բժշկական գրողների միության (AMWA), Եվրոպական բժշկական գրողների միության (EMWA) և Բժշկական հրատարակչությունների մասնագետների միջազգային ընկերության (ISMPP) համատեղ դիրքորոշման այս հայտարարությունը պատկերում է արհեստավարժ բժշկական գրողների համապատասխան դերը բժշկական և գիտական հրապարակումների մշակման գործում, այդ թվում՝

*գործընկերների կողմից ստուգված ամսագրերում հրատարակման համար հոդվածներ և լրացուցիչ բովանդակություն (օր.՝ կարճ տեսանյութեր)

*գիտական համաժողովներում տարածելու համար սեղմագրեր, պաստառներ և բանավոր ելույթներ: ¹⁻¹³

Այս համատեղ հայտարարությունը համահունչ է մի շարք այլ միջազգային կազմակերպությունների արդի ցուցումներին:

Արհեստավարժ բժշկական գրողների պատասխանատվությունները

Մասնագիտական բժշկական գրելու աջակցությունն օգնում է հեղինակներին և հոլանավորներին՝ բացահայտել իրենց հետազոտությունները գործընկերների կողմից ստուգված ամսագրերում և գիտական համաժողովներում, էթիկապես, ¹⁴ ճշգրիտ, ^{15,16} և ժամանակին՝ ¹⁷ ուղղված հիվանդի խնամքի բարելավման վերջնական նպատակին:

Արհեստավարժ բժշկական գրողներն էթիկական հրապարակման ուղեցույցների վերաբերյալ ծավալուն գիտելիքներ ունեն ^{18,19}: Ընկերության կողմից հովանավորվող հետազոտության արդյունքների հաղորդակցության հարցում հեղինակներին օժանդակելիս, նրանք պետք է.

• հետևեն Լավ հրատարակման գործունեության (GPP3) ուղենիշերին և Բժշկական ամսագրի խմբագիրների միջազգային հանձնաժողովի (ICMJE) հանձնարարականներին ^{1,2}

* հաշվի առնեն համապատասխան հաշվետվության ուղեցույցները (օր.՝ CONSORT²⁰-ը և ուրիշներ՝ հավաքագրված EQUATOR ցանցի²¹ կողմից)

* ապահովեն, որ հեղինակներն ու հովանավորները տեղյակ լինեն իրենց ստանձնած պարտավորություններին՝ սույն ուղեցույցի համաձայն ^{1,2,20,21}

• հետևեն արդի բժշկական տեղեկատվությունների էթիկայի և լավագույն փորձի զարգացումներին:

Արհեստավարժ բժշկական գրողների հետ համագործակցող հեղինակների պարտականությունները

Հեղինակները, ովքեր նախընտրում են համագործակցել արհեստավարժ բժշկական գրողի հետ ձեռագրերի կամ համաժողովի ներկայացնելու համար, պետք է.

* ապահովեն, որ որպես հեղինակներ, իրենց հասանելի լինեն բոլոր համապատասխան տեղեկությունները (օր.՝ արձանագրություններ, վիճակագրական վերլուծության պլաններ, վիճակագրական վերլուծություններ և կլինիկական ուսումնասիրության զեկույցներ)

* մտավոր ներդրում տրամադրեն գրելուց առաջ և զարգացումների ընթացքում

* ապահովեն, որ վերջնական տեքստը լիովին արտացոլի բոլոր հեղինակների տեսակետները և հաստատվի բոլոր հեղինակների կողմից

*հաստատեն ամսագրի կամ համաժողովի վերջնական ընտրության հարմարությունը

*հավաստեն բժշկական աջակցության մոտեցումները, ներառյալ աջակցության բնույթը, աջակցության համար տրամադրված բժշկական արհեստավարժ գրողի անունը, ամենաբարձր գնահատված որակավորումները (օր. տիտղոսները կամ մասնագիտական հավատարմագրումը), պատկանելիությունը, (տե՛ս **Ներդիր**) և հավաստեն բժշկական գրելու աջակցության մատակարարման համար ֆինանսավորման աղբյուրները

* համահեղինակ ճանաչեն բոլոր ներդրողներին (ներառյալ արհեստավարժ բժշկական գրողին), որոնք բավարարում են **ICMJE** հեղինակության չափանիշները: ¹

Ներդիր: Բացահայտման հայտարարության ձևանմուշի օրինակ՝ պրոֆեսիոնալ բժշկական գրավոր աջակցության համար:

«Հեղինակները շնորհակալություն են հայտնում [անունը և որակավորումները] [ընկերության, քաղաքի, երկրի] բժշկական գրավոր աջակցության/խմբագրելու [նշեք և կամ համապատասխանաբար ընդլայնեք] համար, որը ֆինանսավորվել է [հովանավոր, քաղաք, երկիր] Լավ Հրատարակման պրակտիկայի (**GPP3**) ուղենիշերի համաձայն: (<http://www.ismpp.org/gpp3>): »

Հղումներ